

**Հարց**

**Պարտադիր է, արդյոք, ՀԴՄ-ի կիրառումը մարդատար-փաթսի ավտոմոբիլներով փոխադրումներ իրականացնելիս:**

**Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ավտոմոբիլային տրանսպորտով կատարվող ուղևորափոխադրումների իրականացման և երթևեկության տոմսերի վաճառքի գործունեության մասով կանխիկ դրամով դրամական հաշվարկներ կատարելիս կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր չէ:

**Հարց**

**Առևտրի օբյեկտի կամ ծառայության մատուցման վայրի ո՞ր հատվածում է տեղադրվում ՀԴՄ-ն:**

**Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հսկիչ-դրամարկղային մեքենան տեղադրվում է առևտրի օբյեկտի կամ ծառայության մատուցման վայրի այն հատվածում, որտեղ կատարվում է վճարումը:

**Հարց**

**Պարտադիր է, արդյոք, ՀԴՄ-ի կիրառումը փաստաբանական ծառայություններ մատուցելիս:**

**Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանական ծառայությունների մատուցման մասով կանխիկ դրամով դրամական հաշվարկներ կատարելիս կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր չէ:

**Հարց**

**Բարձրագույն ուսումնական հաստատության շենքում տեղակայված հանրային սննդի օբյեկտում ՀԴՄ-ի տեղադրումը պարտադիր է, արդյոք:**

**Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատության շենքում տեղակայված հանրային սննդի օբյեկտում կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենայի տեղադրումը պարտադիր է:

**Հարց**

**Հանձնարարության պայմանագրերի հիման վրա ապրանքների մանրածախ վաճառք իրականացնելիս ՀԴՄ-ն ո՞ւմ անունով պետք է գրանցվի՝ հանձնարարողի, թե հանձնակատարի (գործակալի) անունով:**

### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ հանձնարարության պայմանագրի հիման վրա ապրանքների վաճառք իրականացնելիս կանխիկ դրամով դրամական հաշվարկների դեպքում հանձնակատարի անվամբ պետք է գրանցվի հսկիչ-դրամարկղային մեքենա:

### **Հարց**

**Անհատ ձեռնարկատերը զբաղվում է տնտեսական գործունեության և մանրածախ վաճառքով: Պարտադիր է, արդյոք, ՀԴՄ-ի տեղադրումը, եթե արտադրանքն իրացվում է առևտրի իրականացման վայրում գտնվող խանութի միջոցով:**

### **Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ԼՂՀ տարածքում անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Մասնավորապես, ՀԴՄ-ների կիրառումը պարտադիր չէ, եթե գյուղատնտեսական արտադրանքն (այդ թվում՝ տնկիները) իրացվում է տրանսպորտային միջոցներով կամ առևտրի իրականացման վայրերում (առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, տոնավաճառներում և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերում) գտնվող բաց վաճառատեղաններից: Քանի որ վերը նշված պարագայում վաճառքն իրականացվում է խանութի միջոցով, ՀԴՄ-ի տեղադրումը պարտադիր է:

### **Հարց**

**Մեկ աշխատատեղով ավտոտեխսպասարկման կետի կազմակերպման գործունեություն իրականացնելիս պարտադիր է, արդյո՞ք, ՀԴՄ-ի տեղադրումը:**

### **Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «դ<sup>3</sup>» կետի համաձայն՝ մեկ աշխատատեղով ավտոտեխսպասարկման կետի կազմակերպման գործունեության մասով հսկիչ-դրամարկղային մեքենայի տեղադրումը պարտադիր է 2018 թվականի հունվարի 1-ից:

### **Հարց**

**Ո՞ր կազմակերպությունների վրա չի տարածվում «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի գործողությունը:**

### **Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքը չի տարածվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող բանկերի (այդ թվում՝ դուստր բանկերի), դրանց մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գործառնական գրասենյակների (կետերի), օտարերկրյա

բանկերի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձանց՝ միայն այդ գործունեության մասով, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց (այդ գործունեության մասով), գրավատների, վճարահաշվարկային կազմակերպությունների վրա:

### **Հարց**

***Խանութում ապրանքների մանրածախ վաճառք իրականացնելիս կանխավճար ստանալու դեպքում տրամադրվո՞ւմ է, արդյոք, հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն:***

### **Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխավճարի ստացման դեպքում հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոնի տրամադրումը պարտադիր է:

### **Հարց**

***Մանրածախ վաճառքի կամ բնակչությանը ծառայությունների մատուցման ժամանակ վճարումը բանկային քարտերի միջոցով կատարվելու դեպքում, գնորդին կամ ծառայություն ստացողին կտրոնի տրամադրումը պարտադիր՞ է, արդյոք:***

### **Պատասխան**

Քանի որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում, ուստի մանրածախ վաճառքի կամ ծառայությունների մատուցման ժամանակ բանկային քարտերի միջոցով վճարումներ կատարելիս գնորդին (ծառայություն ստացողին) հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն չի տրվում:

### **Հարց**

***Կոմիսիոն հիմունքներով լիցքավորման քարտերի մանրածախ վաճառքի դեպքում պարտադիր՞ է, արդյոք, ՀԴՄ-ների կիրառումը:***

### **Պատասխան**

Լիցքավորման քարտերի կոմիսիոն հիմունքներով մանրածախ վաճառքի դեպքում գնորդներից կանխիկ վճարումներ ընդունելիս ՀԴՄ-ների կիրառումը պարտադիր է:

### **Հարց**

***Տուգանքի ի՞նչ չափ է սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու դեպքում հսկիչ-դրամարկղային մեքենայի բացակայության համար:***

### **Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքով սահմանված դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու դեպքում կանխիկ դրամով դրամական գործարքներ իրականացնելու վայրում հարկային մարմնում գրանցված հսկիչ-դրամարկղային մեքենայի բացակայության համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է հարյուր հիսուն հազար դրամի չափով:

### **Հարց**

**Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտումներ թույլ տված տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ ի՞նչ ընթացակարգով են կիրառվում լրացուցիչ տուգանքները:**

### **Պատասխան**

Մեկ տարվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների երկրորդ և ավելի անգամ խախտումներ արձանագրելու դեպքում տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն է ընձեռվում գործունեության կասեցման փոխարեն վճարել լրացուցիչ տուգանքներ, բացառությամբ եթե մեկ տարվա ընթացքում չորրորդ և ավելի անգամ է սուբյեկտը թույլ տվել հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում, որոնց գործունեությունը պարտադիր կասեցվում է օրենքով սահմանված ժամկետով:

Լրացուցիչ տուգանքի նշանակման համար խախտում թույլ տված սուբյեկտի կողմից խախտումն արձանագրելու օրվանից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմին պետք է ներկայացվի լրացուցիչ տուգանքի վճարման վերաբերյալ գրավոր հայտարարություն, որի հիման վրա էլ հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ նշանակվում է տուգանք:

Լրացուցիչ տուգանքի նշանակման մասին որոշման մեկ օրինակը այն ընդունելու օրվան հաջորդող աշխատանքային օրը տրամադրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Տուգանքի նշանակման օրվանից երկամսյա ժամկետում սուբյեկտի կողմից տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է: